

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ**  
**ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՏԱՐՄԱՆ**  
**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

Ինչպես նախորդ տարիներին, 2016 թվականին նույնպես Գավառի պետական համալսարանը հետամուտ է եղել ԳՊՀ հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի և ԳՊՀ ակադեմիական ազնվության հայեցակարգի դրույթների իրականացմանը:

Համալսարանը շարունակում է աշխատել իր որդեգրած «Կրթություն՝ առանց կոռուպցիայի» և «Կրթությունն՝ ընդդեմ կոռուպցիայի» սկզբունքներին համապատասխան:

Հաշվետու ժամանակահատվածում՝

- վերանայվել են ԳՊՀ գործող կանոնակարգերը և ընթացակարգերը,
- ընդունվել են նորերը,
- ապահովվել են Համալսարանում ընթացող բոլոր գործընթացների թափանցիկությունը, հրապարակայնությունը և օբյեկտիվությունը,
- ձեռնարկվել են ԳՊՀ-ում վարչական, պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ուսանողների պատասխանատվության ու կարգապահության բարձրացման միջոցառումներ,
- հստակ կազմակերպվել է ԳՊՀ ուսումնական գործընթացը,
- իրականացվել է բուհի ինքնավերլուծություն, բացահայտվել են ուժեղ և թույլ կողմերը,
- կազմել և ՀՀ որակի ապահովման ազգային կենտրոն է ներկայացվել Համալսարանի ինքնավերլուծության զեկույցը՝ հայերեն և անգլերեն,
- պարբերաբար ներկայացվել է ԳՊՀ հակակոռուպցիոն դիրքորոշումը հանրապետական և մարզային զանգվածային լրատվամիջոցներով,
- ապահովվել է համալսարանի վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունը,
- ուսանողների շրջանում անցկացվել են շարունակական բացատրական աշխատանքներ,

- ապահովվել են ուսանողների հեռացման, ազատման, վերականգնման գործընթացների օրինականությունն ու թափանցիկությունը,
- շարունակվել է «բաց դռների» քաղաքականությունը, ապահովվել է «թեժ գիծ» և «վստահության արկղիկ»,
- շարունակվել է ԳՊՀ ակադեմիական ազնվության հանձնաժողովի գործունեությունը,
- իրականացվել է ԳՊՀ ֆինանսական հոսքերի և նյութատեխնիկական ռեսուրսների խնայողաբար, արդյունավետ և խելամիտ կառավարում,
- աշխատանքներ են կատարվել ԳՊՀ հակակոռուպցիոն կորպորատիվ մշակույթի արմատավորման ուղղությամբ,
- Համալսարանի գործունեության բոլոր ոլորտներում պահպանվել են օրինականության և սոցիալական արդարության սկզբունքները,
- անխափան գործել է ԳՊՀ բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների հաշվետվողականության սկզբունքը:
  - Ի կատարումն Գավառի պետական համալսարանի հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի՝ հաշվետու ժամանակահատվածում.
    - մշտապես հաշվի է առնվել ուսանողների կարծիքը, բոլոր բարձրացված հարցերին սահմանված կարգով ընթացք է տրվել,
    - համալսարանում շարունակվել է գործարկվել ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման բազմագործոնային համակարգը, ինչպես նաև որպես այլընտրանքային մեթոդ՝ «ExaminationGSU» համակարգչային ծրագիրը,
    - կիրառվել է լուծարային շրջանում ակադեմիական պարտքերի ընդունման հանձնաժողովային եղանակը,
    - պարբերաբար ուսանողների շրջանում անցկացվել են անանուն հարցումներ, որոնք ի թիվս այլ հարցերի, բովանդակում էին կոռուպցիոն վտանգների բացահայտմանը միտված հարցադրումներ, հարցումների արդյունքները քննարկվել են գիտխորհրդի նիստերում, արվել են եզրահանգումներ,
    - ԳՊՀ ուսանողների ջանքերով ստեղծվել և գործում է համալսարանի «www.gsu.am» համացանցային կայքին կից ԳՊՀ հակակոռուպցիոն բլոգը:

ԳՊՀ ներկայացուցիչները մասնակցել են հակակոռուպցիոն թեմաներով հանրապետական և միջազգային սեմինարների, ներկայացրել ԳՊՀ հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի և ԳՊՀ Ակադեմիական ազնվության հայեցակարգի հիմնական դրույթները: Դասախոսներից և ուսանողներից բաղկացած ԳՊՀ ակադեմիական ազնվության հանձնաժողովը քննել է միջանկյալ քննությունների ընթացքում ուսանողների արտագրության արձանագրված դեպքերը: ԳՊՀ ուսանողներն իրականացրել են հակակոռուպցիոն ակցիաներ: Նկարահանվել է հակակոռուպցիոն սոցիալական տեսահոլովակ և հեռարձակվել ՀՀ Գեղարքունիքի մարզի «Գեղամա» հեռուստաընկերությամբ, պատրաստվել են հակակոռուպցիոն պաստառներ, կոռուպցիայի դրսևորումները, պատճառներն ու պայմանները բացահայտող և կոռուպցիոն իրավախախտումների դեմ պայքարի միջոցները ներկայացնող տեղեկատվական թերթիկներ: Համալսարանում շարունակական աշխատանքներ են կատարվում կոռուպցիոն երևույթների նկատմամբ անհանդուրժողականության մթնոլորտի ձևավորման և որակյալ կրթական միջավայրի ապահովման ուղղությամբ: ԳՊՀ-ն 2014-2015 ուսումնական տարում ՀՀ բուհերի ազգային վարկանիշավորման արդյունքում պահպանեց երկրորդ հորիզոնականը երրորդ անվանակարգում. երկու կրթական աստիճանում՝ բակալավրիատում և մագիստրատուրայում, երեքից ավելի մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող բուհերի շարքում՝ զիջելով միայն Հայաստանի ամերիկյան համալսարանին: ԳՊՀ վարկանիշի ձևավորման գործում կարևորվում են հանրային վստահությունը, բուհի հակակոռուպցիոն քաղաքականության հետևողական իրականացումը:

Հակակոռուպցիոն միջոցառումների հետևողական իրականացման, ակադեմիական ազնիվ միջավայրի պահպանման խնդիրները ամրագրված են ԳՊՀ 2016-2021 թվականների հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրում, որը ԳՊՀ 2016-2021 թվականների ռազմավարական ծրագրի բաղկացուցիչ մասն է: